Արտաշես Քալանթարյան

ՈՍԿԵ ԶԿՆԻԿԸ

Կենցաղային սպասարկման բնագավառի ամենահամեստ աշխատողներից մեկը՝ Համբարձում Սանթրոսյանը, որին բարեկամները փաղաքշաբար Համիկ էին անվանում, իր սեփական մոտորանավակով ձուկ էր որսում Սևանա լճում:

Երբ առաջին անգամ նետեց կարթը, դուրս բերեց մի բավականին խոշոր կողակ.

«Դու ինձ պե՞տք ես»,- անբավական քրթմնջաց Համիկը և ձուկը կրկին ջուրը նետեց:

Երբ երկրորդ անգամ նետեց կարթը, որսաց մի հսկայական սիգ: Համիկը միայն մի պահ հաճույքով դիտեց կեռիկից ազատվելու համար փայլփլուն ձկան գործադրած հուսահատական ճիգերը, ապա արհամարհանքով ժպտաց.

«Հիմար, դո՞ւ ում ես պետք: Քեզ նմանները երկու ռուբլով խանութներում թափված են»:

Եվ լիճը նետեց ձուկը:

Իսկ երբ երրորդ անգամ ջրից դուրս հանեց կարթը, կեռիկից կախված օրորվում էր մի... մի իսկական, մի բնական, մի սքանչելի իշխան ձուկ:

«Ես քեզ կերա»,- հրճվանքից դողալով՝ խանդավառ բացականչեց Համիկը:

Բայց կատարվեց հրաշք:

Իշխան ձուկը հանկարծ մարդկային լեզու առավ և վիրավոր շրթունքները շարժելով - մրմնջաց.

- Թո՛ղ ինձ, թո՛ղ, Համի՛կ, թո՛ղ ինձ անվտանգ,

Քեզ կվճարեմ թանկագին փրկանք...

- Վա՞յ,- ապշեց Համիկը,- էդ դո՞ւ ես խոսում:

- Հա՛,- ասաց իշխանը:

- Երանի մեզ,- գլուխն օրորեց Համիկը,- իբր թե խոսացողները քիչ են, ձկներն էլ են սկսում խոսել:

- Ես սովորական ձուկ չեմ,- ասաց իշխանը,- ես...

Համիկը մեղմորեն ժպտաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էդ ի՞նչ ես ասում: Ուրեմն ես չգիտե՞մ, թե ինչ ձուկ ես դու: Դու ոսկե ձկնիկ ես, ոսկե... Քո կիլոն արդեն երեսուն ռուբլով էլ ձեռքներս չի ընկնում:

- Ես կախարդական ձուկ եմ,- ասաց իշխանը:

- Բա որ կախարդական չլինես, էդ գինը կունենա՞ս,- ծիծաղեց Համիկը:

- Բայց ես կարող եմ կատարել քո բոլոր ցանկությունները,- ասաց իշխանը:-Հրամայի՛ր և կունենաս այն ամենը, ինչ ուզում ես... Միայն թե բաց թող ինձ...

Համիկը մի պահ մտածեց.

- Իսկ ի՞նչ կարող ես անել ինձ համար:

- «Վոլգա» ավտոմեքենա ուզո՞ւմ ես,- հարցրեց ձուկը:

Համիկը քմծիծաղեղ և մատով ցույց տվեց ափը: Ափին կանգնած էր մի բոլորովին նոր «Վոլգա» ավտոմեքենա:

- Այդ դեպքում գուցե առանձնատուն,- հարցրեց ձուկը:

- Մեկը Աղվերանում ունեմ, մեկն էլ Սև ծովի ափին: Ես շարքային աշխատող եմ, ինձ դրանից ավելին չի հասնում,- համեստորեն ասաց Համիկը:

- Ճապոնական տեսամագնիտոֆոնի մասին ի՞նչ կասես,- հարցրեց ձուկը:

- Մի՛ մանրացիր,- բարկացավ Համիկը,- և արժանապատվությունդ մի՛ կորցրու:

- Բա ի՞նչ անեմ,- հուսահատությունից լողակները կոտրատեց իշխան ձուկը:-Դո՛ւ ասա՝ ի՞նչ ես ուզում, և ես կկատարեմ քո յուրաքանչյուր ցանկությունը: Ախր ես կախարդական ձուկ եմ, տեսնո՞ւմ ես, խոսում եմ...

Համիկը կեռիկի վրայից հանեց իշխան ձուկը, մատներով բռնեց խռիկներից, նայեց աչքերի մեջ ու ասաց.

- Դե հիմա դո՛ւ ինձ լսիր: Ես ամեն ինչ ունեմ, հասկանո՞ւմ ես: Ես ոչնչի կարիք չեմ զգում: Միակ բանը, որ մեկ-մեկ սիրտս ուզում է, դո՛ւ ես... Ու դու էլ հազիվ ձեռքս ես ընկել: Այնպես որ՝ խոսես, թե չխոսես, ինձ համար ոչ մի նշանակություն չունի, իշխա՛ն ջան: Ես քեզ ուտելու եմ:

Եվ կերավ:

1984թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org